Անցքը ճշմարիտ էր, հէնց այդպէս պատահել էր: Բայց Ասլանը, չգիտեմ ինչո՞ւ, յիշեցրեց այդ, որ փոքր-ինչ անքաղաքավարի երեւաց: Որովհետեւ այնտեղ ներկայ գտնոող Շարիֆ-բէկը ջալալիների ցեղապետն էր, որոնք գործել էին յիշեալ անկարգութիւնները: Ասլանը այնպէս ձեւացրեց, որ իբր թէ չգիտէ, եւ, երեւի, նրան աւելի խոր խոցելու համար, աւելացրեց.

— Ես այդ բոլոր տեղեկութիւնները հաւաքել եմ, անպատճառ պէտք է հաղորդեմ ուր որ յարկն է:

Վերջին խօսքերը ես բոլորովին անքաղաքագիտական համարեցի. ի՞նչ յարկ կար այդ ասելու եւ քուրդ բեկին գրգռելու իր դէմ. նա միթէ՞ կը թողնէր, որ նրա թղթերը տեղ հասնէին, կուղարկէր իր մարդիկը, թէ՛ թղթատարին եւ թէ՛ թղթերի հեղինակին կոտորել կը տար ճանապարհների վրայ: Ասլանը մտածում էր մի տեսակ վրէժխնդիր լինել քրդին, որը բաւական չէր, որ նրա մասին մատնութեան նամակ էր գրել փաշային, այլ ինքն եւս անձամբ եկել էր Վան փաշային օգնելու համար, որպէսզի գտնեն կասկածաւոր անձը:

Ասլանի անակնկալ նկատողութիւններից յետոյ երեք հայ «երեւելիները» շոարած կերպով միմեանց երեսին նայեցին, երեւի խօսք էին որոնում քուրդ բեկին արդարացնելու համար: Առաջնորդը նոյնպէս մտատանջութեան մէջ ընկաւ, իսկ փաշան չգիտէր, թէ որպէս պաշտպանէր իր հզօր աջակցին:

Բայց քուրդ բեկը, որպէս քաջ աւազակ էր իր ասպատակութիւնների ժամանակ, նոյնպէս վարպետ կռոող էր երեւում եւ խօսքի բանակռոի մէջ: Նա բաւական սառն կերպով հարցրեց.

— Պարոն բժշկապետ, դուք ո՞ր ճանապարհով անցաք: Լաւ է, որ յիշեալ անկարգութիւնների միջոցին ձեզ որեւիցէ վտանգ չէ պատահել:

Փորձութիւնն սկսոեցաւ, մտածեցի ես: Հարցը բաւական խորամանկութեամբ էր դրոած. մեծ երկիւղով սպասում էի, թէ Ասլանը որպէս պէտք է դուրս գար դրա միջից: Նա խիստ անփոյթ կերպով պատասխանեց.

— Ինձ հետ վտանգ պատահել չէր կարող, որովհետեւ, ես դեռ Արզրում գտնոած ժամանակ, տեղային ֆրանսիական հիւպատոսը ինձ զգուշացրեց քրդերի այդ ժամանակոայ յուզմունքի մասին եւ նահանգապետից մի բաց հրամանագիր առեց, որ ամէն տեղ ինձ պահապան ձիաւորներ տան, որքան թոով եւ պահանջելու լինէի ես: Եւ ես ճանապարհներին միշտ խումբերով ձիաւորներ ունէի ինձ հետ:

— Այդ լաւ էք արել, պարոն բժշկապետ, այդպիսի զգուշութիւններ միշտ պէտք են, — ասաց քուրդը, որպէս մի վրդովոած որսորդ, որի գնդակը շեղ-